ՎՖՍ ԳԼՈԲԱԼԻ՝ ԿԱՆԱԴԱՅԻ ՎԻԶԱՅԻ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ ԴԻՄՈՐԴՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

1. Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնի կողմից առաջարկվող ծառայություններ

Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնը՝ Կանադա մուտք գործելու համար դիմում ներկայացրած դիմորդներին առաջարկում է մի շարք վարչական աջակցման ծառայություններ և կենսաչափական տվյալների հանձնման ծառայություններ:

Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնում առաջարկվող ծառայությունների հրապարակված սակագները հաստատվել են Կանադայի կառավարության կողմից:

2. Պարտավորություններ

ՎՖՍ Գլոբալը, ներառյալ Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնը՝ Կանադայի կառավարության գործակալ չէ: Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնը լիովին անկախ սուբյեկտ է, որը գործում է Կանադայի կառավարության հետ առկա պայմանագրի հիման վրա, ինչպես նաև այն երկրի օրենքի շրջանակներում, որտեղ մատուցվում են ծառայությունները:

ՎՖՍ Գլոբալը, ներառյալ Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնը, պատասխանատու է իր վերահսկողության շրջանակներում առկա անձնական տվյալների հավաքագրման, օգտագործման, պահպանման պաշտպանության համար:

3. Տրամադրվող ծառայության լեզու

Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնը, կապի բոլոր հասանելի միջոցներով ծառայություններ մատուցելիս՝ հաղորդակցվում է անգլերեն և/կամ ֆրանսերեն, ինչպես նաև տվյալ երկրի հիմնական լեզվով:

4. Ծանուցում անձնական տվյալների վերաբերյալ

Որպես Կանադայի վիզայի դիմում-հայտերի կենտրոնի ծառայությունների օգտատեր՝ ես հասկանում եմ և համաձայն եմ, որ՝

Ես ամբողջությամբ կարդացել եմ այս փաստաթուղթը: Ես հասկանում եմ, որ Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնը տրամադրում է միայն վարչական աջակցություն ԿՆՓՔ (IRCC) հանձնած դիմումների շրջանակում և, որ այդ ծառայությունները մատուցվում են ՎՖՍ Գլոբալի և Կանադայի կառավարության միջև առկա պայմանագրի դրույթների և պայմանների համաձայն, որոնք ներկայացված են այս փաստաթղթում: Ես հասկանում եմ, որ ՎՖՍ Գլոբալը չունի ուժ կամ ազդուցություն վիզայի դիմում-հայտերի որոշման կայացման վրա:

Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնը, անձնական տեղեկատվությունը հավաքագրում է ՎՖՍ Գլոբալի ծառայությունների և Կանադայի կառավարության միջև կնքված պայմանագրի իրավասության ներքո՝ Կանադայի գաղտնիության մասին օրենքի համաձայն: Պայմանագրի գործողությունը տարածվում է ցանկացած հաստատված ենթակապալառուի վրա:

Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնը իմ կողմից ուղարկված փաստաթղթերի ստացումը և անձնական տվյալների հավաքագրումը կիրականացնի բացառապես Կանադայի կառավարության կողմից՝ Կանադայի վիզայի, մուտքի թույլտվության կամ ճամփորդական

փաստաթղթի դիմումի ուսումնասիրության աջակցման նպատակով, ներառյալ նմանատիպ փաստաթղթերի և տեղեկատվության փոխանցում Կանադայի կառավարությանը և դրանց հետադարձ ստացում:

Ի լրումն, եթե ստորև ներկայացված Միջնորդավորված փաթեթներ հանձնելու և/կամ ստանալու համաձայնագիրը լրացված է, ապա ես տալիս եմ իմ համաձայնությունը Կանադայի վիզայի դիմում-հայտի ընդունման կենտրոնին՝ ստանալ/տրամադրել իմ փաստաթղթերը և անձնական տվյալները «Միջնորդավորված փաթեթներ հանձնելու և/կամ ստանալու համաձայնագիր» բաժնում նշված անձին:

Իմ անձնական տվյալները կարող են ներառել իմ դիմում-հայտի ձևը, օժանդակ փաստաթղթերը, իմ մատնահետքերն ու լուսանկարները և այլ կենսաչափական տվյալներ՝ Կանադայի կառավարություն պահանջի համաձայն: Իմ անձնական տվյալները կարող են ներառել նաև դիմումին առնչվող տեղեկություններ, ինքնության, կենսագրական և կոնտակտային տվյալներ՝ ներառյալ էլեկտրոնային գրառումներ կամ իմ դիմումին առնչվող այլ տվյալներ:

ՎՖՍ Գլոբալի և Կանադայի կառավարության միջև առկա պայմանագրի համաձայն Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնը պետք է հարգի Կանադայի մի շարք օրենքներով սահմանված անձնական տվյալների, գաղտնիության և պաշտպանության սկզբունքները: Ես հասկանում եմ, որ Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնին իմ անձնական տվյալների տրամադրման հետ կապված մտահոգություններ ունենալու դեպքում, ես իրավունք ունեմ՝ օգտագործելով Կանադայի վիզայի դիմում հայտի կենտրոնի կողմից ինձ տրամադրած կոնտակտային տվյալները, ներկայացնել բողոք Կանադայի Գաղտնիության հանձնակատարի գրասենյակ:

Ես հասկանում եմ, որ Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնը միայն կհավաքագրի, կօգտագործի, կգաղտնազերծի և կպահպանի իմ անձնական տվյալները՝ համաձայն Կանադայի կառավարության հետ կնքված պայմանագրի, ինչպես նաև Կանադա մուտք գործելու իմ դիմումի համար վարչական օժանդակության և կենսաչափական տվյալների հավաքագրման ծառայությունների նպատակով: Կանադայի կառավարությունը արգելում է Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնի կողմից ցանկացած այլ նպատակով իմ անձնական տվյալների օգտագործումը կամ գաղտնազերծում առանց ԿՆՓՔ (IRCC) համաձայնության և նման գաղտնազերծում կարող է տեղի ունենալ միայն օրենքով սահմանված դեպքերում:

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ _____

ՀԱՍՑԵ _____

ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ _____

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ _____

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ _____

ԱՄՍԱԹԻՎ _____

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է (քաղաք, երկիր) _____

Միջնորդավորված փաթեթներ հանձնելու և/կամ ստանալու համաձայնագիր (լրացվում է միայն այն դեպքում, եթե դիմում-հայտը կամ կայացված որոշումը ներկայացնումև/կամ ստանում է ճանապարհորդական գործակալը կամ հայտատուի ներկայացուցիչը)

Ես համաձայն եմ, որ _____ (քաղաք, երկիր) գործող Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնը ընդունի/հանձնի իմ փաստաթղթերը _____ ին / ից:

Իմ փոխարեն դիմում-հայտը ներկայացնողի և/կամ կայացված որոշումը ստացողի անուն, ազգանուն՝ _____

Հարաբերակցական կապը դիմորդի հետ՝ _____

Դիմորդի ստորագրություն՝ _____

Ամսաթիվ՝ _____

Հայտարարագիրն անհրաժեշտ է ստորագրել միայն այն դեպքում, երբ դիմորդներն էլեկտրոնային դիմում-հայտի լրացման համար ստացել են օժանդակություն Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնի աշխատակիցների կողմից:

Ես ստացել եմ աջակցություն Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնի աշխատակցի կողմից դիմում-հայտում տվյալների մուտքագրման համար: Ես տրամադրել եմ ամբողջական տեղեկատվություն և պատասխանել հարցերի՝ դիմում-հայտի լրացման պահանջների համապատասխան: Ես կարդացել եմ լրացված և տպված դիմում-հայտը և հաստատում եմ, որ տրամադրված ամբողջ տեղեկատվությունը ճիշտ է, և իմ դիմում–հայտի հետ ներկայացվող օժանդակ փաստաթղթերը իսկական են ու ոչ մի փոփոխության չեն ենթարկվել:

Անուն ազգանուն՝ _____

Ստորագրություն՝ _____ **Ամսաթիվ՝** _____

Դիմորդներ, ովքեր ցանկանում են հանձնել կենսաչափական տվյալներ

Սույնով, հավաստում եմ, որ ուսումնասիրել եմ Կանադայի Կառավարության կայքում առկա կենսաչափական տվյալների վավերականության և պահանջվող միջոցների վերաբերյալ ցուցումները և կհանձնեմ իմ կենսաչափական տվյալները Կանադայի Կառավարության կայքում ներկայացված տեղեկատվության համաձայն: Ես կայացրել եմ այս որոշումը իմ ազատ կամքի համաձայն և առանց Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնի աշխատակիցների կողմից որևէ ազդեցության կամ առաջարկի:

Անուն ազգանուն՝ _____

Ստորագրություն `_____

Ամսաթիվ ` _____

Դիմորդներ, ովքեր չեն ցանկանում հանձնել կենսաչափական տվյալներ

Սույնով, հավաստում եմ, որ ուսումնասիրել եմ Կանադայի Կառավարության կայքում առկա կենսաչափական տվյալների վավերականության և պահանջվող միջոցների վերաբերյալ ցուցումները և որոշել եմ չհանձնել իմ կենսաչափայան տվյալները: Ես կայացրել եմ այս որոշումը իմ ազատ կամքի համաձայն և առանց Կանադական վիզաների դիմում-հայտերի կենտրոնի աշխատակիցների կողմից որևէ ազդեցության կամ առաջարկի: Ես հասկանում եմ, որ սա կարող է հանգեցնել իմ վիզայի դիմում-հայտի մերժմանը, առանց ԿՆՓՔ կողմից հետագա ծանուցումների:

Անուն ազգանուն՝ _____

Ստորագրություն `_____

Ամսաթիվ ` _____